

Խ Ր Ի Մ Ե Ա Ն Հ Ա Յ Ր Ի Կ

(Շարունակ. Տես Բազմ. 1907 թիւ 12)



Իր վարքն ու գրական գործերը, ազգային գործունեութիւնը, — առաջնորդութիւնը, —
պատրիարքութիւնը, — կաթողիկոսութիւնը:

Խրիմեան երբ իր դիմաց նկատեց խաւարի մէջ ապրիլ և գործել ուզող եկեղեցականներու, վանականներու թշնամութիւնը և հակառակութիւնը՝ աւելի եւս զօրացաւ ինքն իր ուժերը ամփոփելով. զգաց նա թէ պէտք էր սովորել կամք և յանդուգն արիութիւն խաւար պատնէշը խորտակելու և լոյսը ցուցնելու համար հայ վանականներուն և հայ ժողովրդեան: Իր գաղտնի ծրագրաց իրագործման համար 1856ին նորէն Պոլիս կու գայ:

Այդ շրջանին արդէն ակնյայտին կը նկատուէր հայ լրագրութեան ազդեցութիւնը. բայց լրագրներու հրատարակման կեդրոնավայրը Պոլիսն եղած էր միայն և անոր ազդեցութեան սահմանը՝ շրջակայքը. անդին մութին մէջ կը մնար Հայրենիքը; որ եւրոպական լոյսին պէտք ունէր ինքնաճանաչութեան գալու համար:

Խրիմեան, ինքը միայնակ, ուզեց ջան մը վառել, և այն՝ Հայաստանի մէջ, ինչ որ դժուար երեւցած էր (տեականութիւնը անյուսակի ըլլալուն համար) այնքան գործիչներու:

Հայրենեաց լուսաբերը դիմեց հայ հարուստներուն, որոնք չզլացան իրենց նիւթական օգնութիւնը: Խրիմեան առաջին անգամ մամուլը տարաւ Հայաստանի մէջ: Բայց սակայն նա նորէն չկրցաւ իրագործել իր գաղափարը, մինչեւ որ Կ. Պոլսոյ պատրիարքարանը զինքը Վարագի վանահայր անուանեց: Եւ հիմայ երիտասարդ վանահայրը իր ձեռքն առաւ Վարագի ղեկը և զայն դէպ ի լոյս ուղղեց: Ահա առաջին անգամ հայ մամուլը կը ճոճէ Վարագի մէջ և Արծուի Վասպուրական ամսագիրը կը սկսի հրատարակուիլ 1857ին:

Արծուի Վասպուրականը վեց տարի անընդհատ թուաւ դէպ ի Կ. Պոլիս: Խրիմեան՝ Արծուին բերնով կը խօսէր հայ գեղջուկին, Հայաստանի հովիւին, մշակին, Պոլսոյ տիրացուներուն և աղաներուն հետ. անոնց կը ներկայացնէր հայ երկիրը՝ նկարագրելով անոր ամէն մէկ անկիւնը. իբրեւ ականատես մը՝ նա հայ գրական և քաղաքական անցեալը կը պատկերացնէր:

Հոն կ'երեւան, դեռ աշակերտական շրջանին մէջ, Հայրիկի հիմնած «Ժառանգաւորաց Դպրոց»ի սաները իրենց պատմական, գրական յօդաածներով, որոնք այսօր իրենց գերեզմանին մէջ իսկ դեռ կ'ապրին մեզի հետ, — ինչպէս Սրուանձ տեանց, Փիրղալձեան, Թորմախեան, Տէր Մարգարեանց, Գրիգորեան Արշամ, Տէվկանց Արիստակէս, և դեռ ուրիշներ՝ որոնք իրենց վարժապետին շունչով և զգացումով Հայութիւնը պատմեցին, երգեցին և ողբացին:

Արծուի Վասպուրականը իբրեւ արձան մը կանգնուած է այն Դպրոցին՝ որուն աշակերտներուն հետ իբրեւ հայ գործիչ մը ապրեցաւ Խրիմեան:

Խրիմեան 1860ին դէպ ի Կովկաս ճանապարհորդեց և կաթողիկոսին կոնդակով դրամ հաւաքեց որպէս զի անով թէ՛ դպրոցը և թէ՛ տպարանը զարգացնէ:

Երբ արդէն Վարագը սկսեւ էր ծաղկիլ՝ 1862ին Խրիմեանը Տարօնի առաջնորդ կ'ընտրուի և միանգամայն Ս. Կարապետի Վանքի վանահայրութիւնը կը ստանձնէ,

մի և նոյն ժամանակ անպակաս ընելով իր ազդեցութիւնը վարագի վրայ: Նա այդ աւեր վանքն ալ մշակել սկսաւ. հոն ալ հիմնեց ժառանգաւորաց վարժարան մը, տպարան մը և Աթոռիկ Տարօնոյ կիսամսեայ հանդէսը հրատարակել տուաւ խմբակային Գարեգին վ. Սրուանձտեանցի:

Խրիմեանի պաշտօնէն ի պաշտօն բարձրացումը հակառակորդ վանականները կիրք հանեց, որոնք աշխարհականները իրենց գործիք ըրած՝ նորէն զրպարտութեան թուղթ մը գրեցին և շատ մը ազգայնոց ստորագրել տուին: Այնմիտ զրպարտութիւններ անպակաս էին այդ թղթոյն մէջ. զխրիմեան կապալառ մկրտեցին, իրեւ զոյ հռչակեցին. ինչ որ իրեն համար թերեւս աւելին էր՝ ձայն տարածեցին թէ նա ժողովրդեան շահերը վտանգի մէջ կը դնէ և Տէրութեան հակառակ կը գործէ:

Երբ այս զրպարտութիւնները խրիմեանի յառաջագոյն քայլերը չկապկպեցին՝ Ս. Կարապետի վանականը՝ Քուրդ մը կաշառեցին որ իրենց առաջնորդը սպաննէ: Քուրդը չկարենալով վանականաց փափաքը իրագործել՝ անոր ոտքն ինկաւ զողողալով և նեւ բուռն խնդրեց:

Որ մ'ալ երբ խրիմեան վանքէն դուրս կը գտնուէր՝ բիրտ վանականները զի նեալ քրդեր դրին Ս. Կարապետի վանքին գոց դրան դիմաց և երբ առաջնորդը ներս կ'ուզէր մտնել՝ զենքով դիմադրեցին անոր: Մշոյ ժողովուրդն եղաւ որ եկաւ կոռուով վանքին դռները բանալու իրեն Հայրիկին դիմաց. բայց քրդերը ժողովրդեան ալ դիմադրեցին. և ահա սկսաւ ընդհարումը քրդաց և հայերու միջեւ. խաղաղասէր առաջնորդը տեսնելով որ իր պատճառաւ արիւն կը հոսի՝ աղաչեց զադար տալ պայքարին և Կարինի ճամբով Պոլիս գնաց: Պատրիարքարանը յետ խնդիրը քննելու Ս. Կարապետի ապստամբ վանականներէն չորս հոգի աքսորեց:

Հակառակութիւնը և զրպարտութիւնը չկրցան խրիմեանի արժանիքը նսեմացընել. այլ մասնաւոր երբ նա իր արդար ուժովը հակառակորդները ընկճեց և բարի ընթացքովը զրպարտիչները ջախջախեց՝ հայ ժողովուրդը սիրեց զինքը և 1869 ին Գազմանեանի մահուանէն ետք Կ. Պոլսոյ պատրիարք ընտրեց:

Ժողովուրդը սիրող և անոր շահերը պաշտպանող խրիմեանը իր հովանւոյն տակ առաւ հայութեան մեծագոյն մասը. և հիմայ ի պաշտօնէն սկսաւ յորդորել կառավարութիւնը որ անպաշտպան չթողու հայերը՝ Հայաստանի մէջ, վասն զի նա ականաւ տես եղած էր քրդաց արիւնահեղ աւարառութեանց և կողոպտութեան:

Պատրիարքարանի պարտքերը արդէն թեթեւցուցած էր խրիմեան, Բ. Դուրը ըստ բաւականի զոհացում տուաւ իրեն պահանջներուն և Կ. Պոլսոյ պատրիարքարանը նոր փայլ մը սկսած էր առնուլ. այս ամէնքը նորէն զինեցին խրիմեանի թշնամիները, այնպէս որ նա ձանձրացած՝ հրաժարեցաւ այդ պաշտօնէն 1873 օգոստ. 15 ին:

Խրիմեան ձգեց պատրիարքութիւնը և ուզեց Հոյոյ Հայրիկ անունով ապրիլ. նա քարոզչութեամբ առանձնացաւ և հետզհետէ հեղինակեց ու հրատարակեց հետեւեալ հատորները:

Արդէն դեռ պատրիարք չընտրուած 1866 ին հրատարակած էր « Մարգարիտ արքայութեան երկնից » գրքոյկը որուն չորրորդ տպագրութիւնը եղաւ 1894 ին յիշմիտին: Այդ գրքոյկը համառօտ ճառերու հաւաքածոյ մը պէտք է նկատուի որոնց բնաբանն եղած են աւետարանի խօսքերը. « Ես տրուպս », որ իրեւ վարդապետ և մատակարար պաշտօնեայ կոչուած եմ Աւետարանի սեղանոյն, նոյն ամենայի անպակաս տարանջին հինգերորդ, վեցերորդ և եօթներորդ գլխոյն վրայ մեր մտաց չափաւորուած թեամբ խորհրդածելով դիւրածեմ յորինեցի այս փոքր « Երկնից »:

Տասը տարի վերջ 1876 ին «Դրախտի Ընտանիք»ը և «Յիսուսի վերջին շաբաթ, Խաչի ճառ»ը հրատարակեց։ Առաջինը՝ ընտանեկան յարկին տակ խաղաղութիւն և սէր կը քարոզէ և հեղինակը՝ նախաբանը կը սկսի. «Բարեկամ ժողովուրդ Հայոց, ձեզ կը նուիրեմ դուզնաքնայ երկասիրութիւնս՝ որոյ մակագիրն է Դրախտի ընտանիքը։ Այս անուն քաղցր ու ժողովրդական է՝ թերիս զարմանաք և մեղադրէք զիս, զի զըջիս առարկաներն՝ առաւել աշխարհիս առարկայից վերայ են քան թէ երկնից արքայութեան... Ժողովուրդ Հայոց, յուշ բեր, ո՞ր է քո հայրենեաց դրախտը զոր կըրուած էք. դուք այն վայելչութեան և ազատութեան դրախտին զաւակներն էք. ո՛հ, մեր հին նախածնողաց պէս դրախտի յանդիման նստած կը մորմոքինք կու լանք դառնապէս»։ Հայրիկը վերացական դրախտին մէջ ուրիշ դրախտ մը կը պատկերէ. «Ողբով ու կոծով մեր կըրուած դրախտը (Հայրենիքը ըսել կ'ուզէ) միթէ կարող եմք գտնել. թող մեր աչքը լայ, մեր սիրտն զգայ. բայց աշխատինք մտքով, աշխատինք ձեռքով. մեր կեանքն ու վիճակը գտնել և դորա միջոցն է մի միայն՝ ընտանիքը վերանորոգել»։ Յառաջաբանի այս փոքր կտորէն կարելի է իրիմեան Հայրիկի այս գրքին նպատակը գուշակել¹։

Նոյն 1876 թուականին՝ հրատարակեց «Յիսուսի վերջին շաբաթ Խաչի ճառ» գրքոյկը։ Այդ հատորիկը զիբրմեան իբրեւ բանաստեղծ կը ներկայացնէ. բայց այն հաղածուած, նեղուած, վշտացած բանաստեղծներէն՝ որոնց վիշտը աւելի է, երբ հալածուող ո՛չ թէ միայն ազգակից է՝ այլ և կրօնակից։ Եւ այդ հրաշալի գրքոյկը կը նուիրէ «առ պաշտօնակից եղբարս և խաչակիր ուխտն եկեղեցւոյ»։

Հալածուած, վշտացած Հայրիկը կը դառնայ իր պաշտօնակիցներուն և կ'որոտայ. «Մտիկ ըրէք, ո՛վ դուք, սէր քարոզող վարդապետներ, Սէքն ձեզ կ'աւանդէ, երկնախօս վարժապետ՝ սիրոյ դասեր կ'ուսուցանէ... Աւաղ մեզ, ուշամուտաց եղանք. հազար ութ հարիւր տարի է այս դասերն Աւետարանը մեզ կ'աւանդէ. և մենք կը կարդամք ժողովուրդին. տակաւին ո՛չ մենք սովորեցանք՝ ոչ ժողովուրդ հասկցաւ. Սիրոյ դասը թողինք՝ յատելութիւն կըթցինք զմեզ, սիրոյ կտակը տուինք՝ բանասեր կուին նախանձն առինք. սէրը կըրուսինք՝ և զրգոյշ թշնամութիւնը գտանք։ Այլ եւս ի մէնջ ո՛վ կը համարձակի սէր քարոզել ժողովուրդին, երբ սիրոյ ճառախօս վարդապետներս՝ սիրել չգիտեմք, հետ միմեանց ատեղութեամբ կը վարիմք. և ի՞նչ փնաց, որ խաչն ու Աւետարանը մեր գրկէն թողումք, և սուր առնելով՝ միմեանց կողը մը խեմք»։

Իրիմեանի այս երկը թէ՛ արձակ բանաստեղծութեան հատոր մ'է և թէ՛ աղօթարգիրք մը. ան խանդավառ հաւատքով Քրիստոսի վշտալից կեանքին կ'ընկերէ. Սիօնի վերնատունէն՝ մինչեւ Զիթենեաց Լեռը կը բարձրանայ։ Եւ գրքոյկը կ'աւարտէ «Յաղթանակ ճշմարտութեան» զլիով, ճշմարտարիւնը հոն մարմնացումն է Աստուած որդւոյն որ մինչեւ իսկ խաչին վրայ բարձրացաւ, և այդ ճշմարտութիւնն է միակ պաշտպանը հէք Հայրիկին։

«Ո՛վ ճշմարտութիւն, թող մարգիկ և ստութեամբ պաշտօնիցայնիրմ այնպէս կարծիմ թէ զքեզ կը հայածնի. և կամ քո ծառայները կը չարաքնն. որոց պատմէր տուիր, որ չարին դէմը ճակատակից եթէ մի քաղաքէմ հայածնի՝ ի միւս քաղաք կ'ախշիմ. և միթէ աշխարհ զքեզ յախտնամ պիտի վամէ, դու ո՛վ խաչեալ ճշմարտութիւն, ոչ ապաքէմ իրախոյս տուիր խաչնդ դրօշակնմ սակ զիմուրդով ծառայնիրուդ. քաջաիրեցարո՛ք, զի ես յաղթիցի աշխարհի ...»

Ամուսնիկ այս է. ո՛վ ամբողջ ճշմարտութիւն, որ աշխարհ զքեզ կ'աւաղէ, քո միտք և քո լեզու չի հասկնար։ Այլ զքեզ սիրող և պաշտող ծառայներն շատ են. թող աշխարհ իւր քերականմ. մերով, փիլիսոփայն իւր զըջով, բնագէտն իւր փորձով տըքնի ու ցնծի չքացուցանել քո գորութիւնմ. քո զիմուրդեալ ծառայներդ մինչեւ ցմահ կը մըքնիմ, և քո Աւետարանդ քաւական է այն ամէն յաւ.

1. «Դրախտի ընտանիք»ի չորրորդ տպագրութիւնը 1893ին եղած է։

մառ փիլիսոփայից կարծիքները մուսճել ու ցրել, մամաւամդ այն վերջիմ պահով՝ միծ կը ցնդի մոցա զխոյն ուղկը, զրոյ մատուրները կը չորման, աստեղադէտ աշկումը դէպ ի հող կը յառիծ. կորովի մտաց լոյսը՝ մահուամ ստուերին տակ կը մոհմամայ. և դու յայնժամ կու գաս ու կը քա. դես մորա ոգին, կը փչի ճողակներս ամօթմ. փիլիսոփայն հող կը դառնայ, դու լոյս կը մնաս. փիլ. լիսովայն կը մնանի, իսկ դու ամմա՛ւ և ամմահութիւն ես, փիլիսոփայն ափ մը հողին մէջ յալիսեան կը լռէ. կը դադարի և կը խոնարհի իր Գալարս գիտութիւնէն. այլ դու կանդամի և յալիսեանկամ իմաստութիւն ես. քո գիտութիւն անչափ անսահման ովկիամոս է և երբէք չես սպառիր...».

Այս գրքոյնը նոր երեւցեր էր. երեկոյ մը Ս. Ղազարու Ճեմարանի մէջ, ճրագի լոյսով կը տեսնուէին աւետր ծերունիներու դէմքերը. խորը, Հ. Ալիշան՝ գլուխը ձեռքի գրքոյկին հակած՝ լուռ կ'ընթերցուէր զայն. երբ ընթերցումը աւարտեց, խոշոր աչքերը վեր բարձրացուց (շարժում մը որ արդէն իսկ ամենուն ուշադրութիւնը դէպ ինքը լարեց) և գրքոյնը փակելով՝ ըսաւ. «Իթէ ինքը գրեւ է նէ՛ ա՛ֆերիմ»:

Հ. Մ. ՊԱՏՈՒՐԵԱՆ

Հայայտարիչի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՅՑ

Ա. ՄԱՏՐԻԿԻՍ

Ջառանցանքի մէջ հնաացայ քեզնից,
Ուզեցի ամբողջ աշխարհը շրջել,
Ուզեցի գտնել սէր գորովալից,
Եւ այդ վառ սիրոյն հոգով նուիրուել:
Նրա յետեւից շատ թափառեցի
Տխուր յուսահատ շատ դուռ բաղնիցի
Եւ սիրոյ փշրանք մուրաց իմ հոգին:
Բայց ասեղութիւն, ծաղրով ի՞նչ տւին:

Գնացի անվերջ սէր որոնելով,
Բայց և ոչ մի տեղ սէր չը գտնելով,
Վերջապէս դարձայ դէպի մեր անակ,
Տրտում յուսախաբ, դէմքով այլանդակ:

Դուք եկա՛ր հանդէպ դու քու որդեակին
Եւ պարզ ցոլացին քո աչքում միայն
Բաւոր այն սէրը, որը կաթողին
Փնտտում էի ես անվերջ ունայն:

Բ.

Երջանիկ է նա, ով անվերջ սիրով
Սիրում է բնութիւն մանկական հոգով.
Ուժ հարազատ է անբան անասուն,
Թէ՛ մարդ թէ՛ զագան, ծաղիկունք սիրասուն:

Երջանիկ է նա, ում սրտի խորքում
Թէ՛ վարդ, թէ՛ զեռուն նման են սիրում,
Ով դեռ չէ քամել վոթիկ արցունք յորդաւաստ.
Եւ ով չէ վոթիկ արին անարատ:

Երջանիկ է նա, ով վաղ հասակից
Թոյլին, ճշւածին զառնէ կարեկէր
Որբին, Թշառին, անասուն աղքատին
Ջուրէ և ինքը, տակ իր հոգին:

Աշխարհս լեցած է մարդկանց վշտերով,
Լքած՝ կենդանեաց պէս պէս տանջանքով,
Երջանիկ է նա, ում խոր սրտի մէջ
Միշտ անկեղծ սէրը վառում է անշէլ:

Երջանիկ է նա, ով փաղաքշանքով,
Համբիւ ու կաղին, անհետ կորածին
Տալիս է հանգիստ, և վառը սրտով
Հոգի ներշնչում Թշառ գրկածին:

Երջանիկ է նա, ում ծայնն արդար
Հնչում է յաւէտ նշնաւի համար,
Մէջ սև խաւարի որպէս վառ փարոս
Կանչում է դէպ՝ ինք սիրով յորդաւաստ:
Թրվով. Մ. ՏԱՐԱԽԱՆԵԱՆ



ՔԱՄՄԻՆ

Քամին եմ,
Երազանք եւ կու գամ ես
Մէջ ընդարձակ անտառին
Կը շրջնոցեմ շառաչով:

Եւ երբեմն
Տըղու մը պէս անուշ, մեղմ
Երազանք եւ կու գամ ես
Եւ շրջնոցեմ շառաչով:

Եւ յանկարծ
Կը մըրնչեմ մոլեգին.
Խաղաղ մինչ և ի՞նչ կ'ուզեք,
Դուռ, պատուհան գոցեցէք:

Քամին եմ,
Երազանք եւ կու գամ ես,
Մէջ ընդարձակ անտառին
Կը շրջնոցեմ շառաչով: